ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

թիվ 03- 187

« 25 » հոկտեմբերի 2011թ.

Լոռու մարզպետ՝
պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու թիվ 26-Ն և 27-Ա որոշումները:

Թումանյանի քաղաքապետ՝ / Լ. Զավարյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հոկտեմբերի 2011 թ. թիվ 26-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 Թ. ԲՅՈՒՋԵՅԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հ Հ օրենքի 34 հոդվածի առաջին մասի առաջին կետի .

Ընդունել ի գիտություն Թումանյան համայնքի 2011թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը համաձայն թիվ 1 հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհիբեկի			
Գորգինյան Ռոման Վանիկի			
Շահվերդյան Սեյրան Սուրենի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			

Թումանյանի քաղաքապետ / Լ . Ջավարյան /

Հավելված 1
Թումանյան համայնքի ավագանու
2011 թ 20. հոկտեմբերի թիվ 26 - Ն որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ-ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2011թ –ի երրորդ եռամսյակում բյուջեն կատարվել է եկամուտների գծով՝ 94.4 %-ով, նախատեսված 22122.5 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 20893.0 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 4583.0 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 3533.5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝77.1 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 17359.5 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 17359.5 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100% :

1. Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի 2011թ-ի եկամուտները երրորդ եռամսյակում նախատեսված էր 22122.5 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 20893.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 94.4%: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 4583.0 հազ. դրամ, կատարվել է փաստացի մուտք 3533.5 հազ. դրամ կամ կատարմա ն տոկոսը՝ 77.1 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետա-բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 17359.5 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100%:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2011թ-ի երրորդ եռամսյակում բյուջեով նախատեսված էր 876.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 642.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 73.3 %: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հողի հարկի կատարման տոկոսը աճել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար երրորդ եռամսյակում նախատեսված էր 181.8 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 121.2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 66.7 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 1280.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 910.9 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը 71.2 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է :

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները նախատեսված էր 467.5 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 383.2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 82.0%, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է :

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2011թ-ի երրորդ եռամսյակում բյուջեով նախատեսված էր 2220.0հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 1415.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 63.8%, այդ թվում՝ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները՝ 180.0 հազ. դրամ, որը չի տրամադրվել այս եռամսյակին: Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը նախատեսված էր 121.5 հազ. դրամ, որը տրվել ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%: Այլ եկամուտների կատարման տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է:

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Այս եկամտատեսակը նախատեսված էր 17359.5 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %:

2. Վարչական բյուջեի ծախսերի կատարողականը

Վարչական բյուջեի ծախսերը 2011թ.-ի երրորդ եռամսյակում բյուջեով նախատեսված էր 22122.5 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 19643.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 88.8 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

ա) Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով ծախսերը 2011թ.-ի երրորդ եռամսյակում բյուջեով նախատեսված 14703.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 12638.5 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 86.0 %:

բ) Քաղաքացիական պաշտպանության համար նախատեսվել էր 15.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել:

գ) Տնտեսական հարաբերությունների համար նախատեսվել էր 180.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել:

դ) Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 390.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 268,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 68.7%:

ե) Հանգստի, մշակույթի և սպորտի ծառայությունների գծով ծախսերը նախատեսված էր 265.0 հազ. դրամ, փաստացի ծախս, կատարվել է 218.7 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 82.5 %:

զ) Կրթության և գիտության գծով ծախսերը նախատեսված 5030.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 4978.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 99.0 %, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 4750.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 4738.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝99.8 %, իսկ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների գծով ծախսերը նախատեսված է 280.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 240.0 հազ. դրամ, կատարման տակոսը՝ 85.7 %:

է) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 1418.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 1418.0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100.0%:

ը) Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի համար նախատեսված 121.5 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տակոսը՝ 100 % :

2).Ըստ տնտեսագիտական դասակարգման 2011 թ. երրորդ եռամսյակում բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են՝

ա) Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ նախատեսված 11778.4 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս՝ 10471.3 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 88.9 %:

բ) Պարտադիր սոց. ապահովագրական վճարները նախատեսված 2466.8 հազ. դրամի փոխարեն կատարվել է 2260.6 հազ. դրամի ծախս կամ կատարման տոկոսը՝ 91.6%:

գ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 4151.9 հազ. դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 3391.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 84.5 %:

դ) Սոցիալական նպաստներ և կենսաթոշակների գծով նախատեսված 300.0 հազ. դրամ փաստացի ծախս կատարվել է 300 ,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0%:

ե) Դրամաշնորհները նախատեսված է 2946.8 հազ. դրամ,փաստացի կատարվել է 2935.4 հազ. ծախս, կատարման տոկոսը՝ 99.6 %:

զ) Այլ ծախսերը նախատեսված է 490.0 հազ. դրամ, սակայն փաստացի ծախս կատարվել է 284.2հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 58.0 %:

3.Ֆոնդային բյուջեի ծախսեր

Թումանյան համայնքի 2011թ.-ի երրորդ եռամսյակում ֆոնդային բյուջեով նախատեսված էր 1100.0 հազ. դրամ ծախս, սակայն փաստացի ծախս կատարվել է 1099.0հազ. դրամ կամ կատարման տոկոսը 99.9 % :

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/
Կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի
առաջատար մասնագետ հաշվապահ՝ /Ա. Ամիրջանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հոկտեմբերի 2011թ. թիվ 27 -Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյան քաղաքային համայնքի ավագանու.**2011** թ.փետրվարի 4-ի < Թումանյան համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին > թիվ 1-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Ումուդ Կիակոսյանի , Արփիկ Մելքումյանի ,Անահիտ Աղաջանյանի,Աշխեն Արզումանյանի ,Նունե Շահվերդյանի և Նարգիզ Մելիքյանի դիմումները.

1. Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729/ Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն .

1. Ումուդ Կիրակոսյան - 30 000 դրամ
2. Արփիկ Մելքումյան - 30 000 դրամ
3. Անահիտ Աղաջանյան - 30 000 դրամ
4. Աշխեն Արզումանյան -20 000 դրամ
5. Նունե Շահվերդյան -20 000դրամ
6. Նարգիզ Մելիքյան -10 000դրամ

2.Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Անգին Ծատինյանին լիազորել Ալավերդու ՏԳԲ –ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհիբեկի			
Գորգինյան Ռոման Վանիկի			
Շահվերդյան Մեյրան Սուրենի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			

Թումանյանի քաղաքապետ / Լ . Ձավարյան /